

նութեան մերոյ» (Թղթ. 227): Այդպիսի աստուածաբանական խնդիրներն աւելի դիւրահաս էին մեր «որովայնամոլից» (անդ, 230) որկորին քան մտաց: Կրօնքը հաճոյքին հետ հաշտուելու էր՝ եթէ կ'ուզէր ընդունելի լինել:

Հարց մ'ալ: Հայ ազնուականութեան այն անբաւ բազմութեան մէջ ինչո՞ւ չկայ Յուլիոս Կեսար մը՝ որ իւր Յիշատակարանքը թողուր, կամ Քսենոփոն մը՝ որ Կիւրոսի արշաւանք մը տար մեզ: Ուսկի՞ց էր անոնց հռչակուած՝ «անսիրելութիւն ի մաստութեան», որով Սահակ բազրատունի մը «միայն գտաւ» խնդրող Հայոց պատմութեան (Խոր. 7), որով դեռ ժԲ դարուն Լամբրոնացին կը հարկադրէր ըսել իւր հարագատին՝ Հեթմոյ՝ թէ «միայն զքո բարեպաշտութիւնդ ի մերումս ժամանակի տեսաք վար արկեալ ի խնդրել եւ յուսանել» (Հյպտ. 427): Եւ տսոնք ալ մատենագիր չեն, այլ լոկ ընթերցասէր: Մշտաւոր ամլութեանս պատճառը միշտ նոյն է. հանապազօրեայ զեղծ խրախճանութիւնք, որոնք կրնային նպաստել Վասակայ եւ իւր բարձակցաց «թանձրամսութեան» (Եղիշ. 120), բայց ոչ մտաւոր ծննդոց՝ որոնք բաժին պիտի մնային վա-